

ԱԶԳԱՅԻՆ

Եւրո խրկելու համար: Նոյն նամակները կը ծանուցանեն նաեւ, թէ Նիւ- յորքի ու Թիւրքի տէրութեանց մէջ պա- տերազմ բացվել է:

— Պալմիրայի եկած լուրերը կը ծա- նուցանեն, թէ մինչեւ մայիս 24- անդ- ղեացուց նաւատորմը 12 ռուսի նաւ գերի բռներ է:

ԳԵՂՂԻԷ: Սոփի- լազիւր կը ծանուցանէ, թէ կառավարութիւնը հը- րաման բերէ՝ Սէլասթրուքի քովն եղող Քամիշի նաւահանգիստը ամուր բեր- ղերով եւ մարտիկներով զօրացնելու, եւ երկրորդ փոքրիկ Սէլասթրուք մը ձե- լալով: Արդէն շինու թիւները մեծ փութով յառաջ տարվելու վրայ են եղեր:

ՍՊԵՆԷ: Սարահոսայի մէջ տարա- տաճութիւն ծագելով, այս գաւառը եւ ուրիշ երկու գաւառներ պաշարման վի- ճակի մէջ դրվեցան:

Արդէն լուրերը կը ծանուցանեն, թէ ապստամբները տէրութեան զօրե- րէն յաղթվելով յիշուցան եղեր են:

ԲՕՐԹՈՒՄԷԼ: Սպանիայի Լեօ- լազիւր Լիզալոսայի գրոված նամակով մը կը հաստատէ, թէ Բորթոմալի կա- ռավարութիւնը Պաղղոյ ու Բնդոյ հետ դաշնագրութիւն բնկով՝ խոտա- ցեր է 8,000 զօր խրկելու Վերմ:

ՏԵՆԵՐԵՐԸ: Կառավարու- թեան նախորդ պաշտօնները 2 միլիոն ու կէս ֆրանք ծախք ընելով առանց պատգամաւորաց ժողովոյն հրամանին, տէրութեան սահմանադրութեանը դէմ յանցաւոր ամբաստանեցան եւ հիմա դա- տաստանին կը ակնարկ: Ամենէն ծանր ամբաստանութիւնը նախորդ պատերազ- մի պաշտօնակց Պ. Հանսենին դէմ է, որ վերջիվերջ երկու միլիոն ու կէս ֆը- րանքը զինուորական պատրաստութիւն- ներու ծախք ըրեր է, որով պատգամա- լորաց ժողովը կասկածի դացեր է թէ կառավարութեան պաշտօնները Ռու- սիոյ վրայ համակրութիւն ունին, եւ այս պատրաստութիւնները կրնն եղեր, որ- պէս զե արեւմտեան տէրութիւնները Տանիմարցայի ֆիսա մը ապ ուղղին նէ, դէմ դնելու կարող ըլլան:

ՌՈՒՄԷԼ: Պատերազմական պատ- րաստութիւնները, զօրաժողովները եւ ամբուլթեան գործերը վերջին աստիճան փութով յառաջ կը տարվին:

— Սիւլլեքով լիւսանը մայիս 18 ին Բեդրասուրի հասաւ իր որդւոյն հետ՝ որ տեղակալ զօրապետի աստիճան ունի: Արտին թէ Եղեքանդը կտրուր մեծ յար- դանօք ընդունել է զանիկա, եւ կայա- րուհւոյն ներկայացուցեր է իբրեւ տե- րութեան ամենէն անձնանուէր ծառայ- ներէն մէկը:

— Արեւմտայի մէջ այս օրերս լուր տարածվի է, թէ Արսասոյն մեծ դաւը- սը մեծ ծովապետի պաշտօնէն հրաժա- րել է: Ըստ պատճառ կը համարին՝ Բեդրասուրի մէջ խաղաղասէր կողման ըրած յառաջարկութիւնը: Յայտնի է, որ Արսասոյն իշխանը պատերազմ ուղղներէն է:

Այսպիսով ու Սոլտաիային եւ կած նամակները բերկրալ լուրեր կու- տան հոն բնակեալ ազգայնոց ուսումնա- սիրական վեճակին վրայ:

Պոթու շանի հայկական դպրոցը՝ տեղ- ւոյն ազգասէր բնակեաց յարատեւ խա- մօքն ու լուսաւորեալ ջանքովը յաջողու- թեամբ կը շարունակէ իր վաղուց ի վեր ունեցած բարեկարգ ընթացքին մէջ:

Նմանապէս Պոքրէշի Հայ բնա- կիչներն ալ գովելի փութով կ'աշխատին իրենց գեղեցիկաշէն հոյակաւ դպրոցը ար- ժանապէս բարեկարգելու, եւ զանազան օգտակար ուսմունքներու դաստոնու- թեամբ պայծառացնելու յօգուտ եւ ի կրթութիւն իրենց դաւակցը: Ըստ դո- վելի նպատակին հասնելու համար, առա- տաճեալ նուէրներով կը ջանան դպրա- տան շինութիւնէն մնացած պարտքերը թեթեւցնելու:

Առանցիկ եւ Դանուբեան գաւա- ռաց առաջնորդ Երթանապատի Տ. Սիւրուք ծայրագոյն վարդապետն՝ անց- եալները Պոքրէշ երթալով, ժողովրդ- եան այս փափաքը լեցնելու մեծապէս նպաստել է: Իր յորդորանքն ու ջանքը վը 326 մաճառ ոսկի (իրեւ 21,200 դրուռ) տուք հաւաքելու է դպրատան պարտքերուն համար, եւ այս բարեյա- ջող արդիւնքին վրայ ժողովուրդը վերջին աստիճան հաճ եւ ուրախ ըլլալով, բազ- մաթիւ ստորագրութեամբ վերջիվերջ արժանապատիւ Սիւրուք վարդապետին ունեցած դոհութիւններն կը յայտնեն ա- մենապատիւ Սրբազան Պատրիարքին:

Ղանիկու գաւառին Օրտու քա- ղաքը բնակող սակաւթիւ Հայ ժողո- վուրդը՝ գովելի փութով եւ միաբանա- սէր ջանքի գեղեցիկ եւ հոյակաւ եկե- ղեցի մը շինել ընդնկէն ետեւ, հիմա կը լսենք, որ իրենց բարեխնամ առաջ- նորդ արժանապատիւ Տ. Սիւրուք ծայ- րագոյն վարդապետին յորդորանքը ու սուսմասիրական ընկերութիւն մը կազ- մել՝ դպրատուն մըն ալ շինելու ձեռք գարկեր են՝ իրենց զաւկներուն կրթու- թեանը համար:

Ըստ քրիստոնէական եւ ուսումնա- սիրական գովելի ջանքերը մեծ պատիւ կ'ընեն թէ՛ վերջիվերջ արժանապատիւ առաջնորդին, եւ թէ՛ Օրտուի բարեւեր բնակչացը:

Փիլիշեան մեծապատիւ Նշան ա- ղան 5,000 դրուռ շնորհեց Քընա- լը կղզին շինվելու սկսեալ Հայոց Սուրբ Լուսաւորիչ եկեղեցւոյն համար:

Այսպիսի կերակի Պէպեքի դադ- ղեացուց դպրոցին մէջ ամառական համա- ռօտ քննութիւն մը ըլլալով, բերկրա- լը տեսարանի մը ներկայ դանդիցանք:

Ընկոյժ ու եռանդուն աղջակներ եւ ըրտասարգ մը Ըրդոյ Պ. Սիւրուք Ե- նուշեան յիշեալ դպրոցին հայերէնի դա- տատուն՝ հոն վարժվող Հայ պատանի- ները ազգասիրական զգացմանց մէջ կը- թելու, եւ միանգամայն ազգերնուս պան- ծալն հնութիւնն ու նախնի փառաւո- ռութիւնը հոն գանձվող օտարաղբիւն- րուն ծանօթացնելու նպատակաւ, մեր յաւերժայիշատակ նախնիներէն ունաց մեծազօրութիւնները թատերական վե- պատանութեան ձեւով շարադրել մաս-

նաւոր խնամով մը իր աշակերտներուն սորվեցուցեր է հրապարական քննու- թեանց մէջ ներկայացնելու համար:

Այսպիսի կերակի օրուան հանդիսին մէջ կարգը մեր մեծանուն Արամ Նահա- պետին պատմութեանը եկած ըլլալով, աշակերտները բաւական յաջողութեամբ ներկայացուցին քաջազունին վեմ նկա- ռադիրը, որուն հոն գանձվող Հայ եւ օ- տարաղբի հանդիսականները ծափա- լու թելու հաճութիւն ցուցրին: Հան- դիսականաց մէջ քանի մը դադղեացի զին- ուորական հրամանատարներ ալ կային:

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Այստեղական հրամանաւ՝ Արքունի պալատան բժիշկ եւ Գում- պար հանէլի բժշկական դպրոցին գտա- տու Սիւնադոյ Անապետի Պապար աղային զննապետի աստիճան տրվեցաւ:

— Պրուսայի աղետալ գեանաշար- ժէն Ապիւլ-Պատիր Լիւրին տունն ալ կործանելով, Լիւրը Պաղղոյ կառա- վարութիւնէն հրաման խնդրել էր ուրիշ տեղ մը երթալու բնակելու: Պաղղոյ կառավարութիւնն ալ հրաման ընելով որ Կ. Պոլիս բնակի, անցեալ շաբթու- Ապիւլ-Պատիր Լիւրին իր ընտանեօքը Կ. Պոլիս եկաւ:

— Պաղղոյ լազիւրները լուր կու- տան թէ Բ. Գրան կառավարութիւնը անդղեացի Լայնէլ Տօսպրեն ճարտա- րապետին հետ պայմանագրութիւն մը ը- րել է շանաղ Պալէն Եղիպտոս ծո- վուն տակէն երեքարական հեռագիր մը շինելու:

— Պոքրէշէն եկած նամակները կը ծանուցանեն, թէ ուսները Կարայիլէն ու Արաքէն ցորենով դարձող նաւերը Չաթալի առջեւ արգիլել են:

Եւ որովհետեւ այս նաւերէն շատը Բնդոյ համար առած են եղեր ցորենը, հաւանական կ'երեւի որ ուսներն անոնց ապրանքը զրաւեն:

— Շաբաթ եւ կիրակի օրերը քա- նի մը առադատանաւ լեցուն Օսման- եան զօրք Առանցէն Կ. Պոլիս եկան՝ անդղեացւոյ պատրաստելը բանակին հա- մար:

Մինչեւ հիմա կայսերական կառա- վարութիւնը տաներիւ վաշտ (Թա- պուր) զօրք տուաւ այս բանակին:

Առանցէն եկածները Բումէլի կայսերական բանակին զօրքերէն են:

— Երգրուլի կառավարութեան տա- կը գանձվող խնուս նահանգին հայ բնա- կիչներն իրենց խորին շնորհակալութիւնը կը յայտնեն խնուսի այժմեան կառավա- րիչ Խուրշիդ պէյէն, որ բարեխնամ եւ արգարասէր անձն մը ըլլալով, հայրաքա- կը խնամէ նահանգին հայ բնակիչները, եւ անոնց հանգստութեանն ու բարեկե- ցութեանը արտի մաօք կ'աշխատի՝ աղ- դուլութեամբ զապելով տեղւոյն ապրա- տամբ քիւրտերը, որ մեծ նեղու թիւն կը հասցնէին մեր ազգակիցներուն:

Այստեղական բարեխնամ կառավա- րութիւնը՝ այս բարեխնամ կառավարչէն խահեմ եւ հանձարեղ վարմունքը վար- ձառնելու համար՝ Պարուշի Պաշու- թեան աստիճան շնորհեց իրեն:

— Պարատաղի տահմինաղլիէն մա- յիս 6 թուով հետեւեալ լուրերը կը զրկն մայրաքաղաքիս դադղեւրէն Բե- Տ'Օ-է-ը լազրին:

Երէկ սուրբ Գեորգի տօնին օրը՝

քաղաքական եւ պատժական նոր դատա- տանադիրք մը տպվեցաւ Աթիշի (Գա- լատաղի մայրաքաղաքը) մէջ, որ քանի մը խիստ կարեւոր բարեկարգութիւններ կ'ընէ: Արն արձակելու եւ երկու կին առ- նելը կարգիլէ, որոնք սովորական բան մը եղած էին այս քրիստոնէայ երկրին մէջ: Ամապք ամեն իրաւունքէ զուրկ էին, եւ պարզապէս զուարճութեան գործիք մը սեպված էին: Արեւմտեան առջի օրը՝ այս մը իր կինը արձակելու սպառնալքը ը- նելով, կինը իր այրն ուսմանց քնացած տեղը: Օտարակալ ժողովն ալ մարդուն եղբօրը եւ ազգակիցներուն հրաման ը- րաւ, որ՝ կինը տանին ձեռքովէն կախն: Արքի Տրապարակին մէջ: Եսանիով անձնական վեճիվերջութեան հին օրէն- քը վերստին հաստատվեցաւ: Արքիվը անուն մէկը տէրութեան մթերանոցնե- րէն քիչ մը վառօք դողցած ըլլալուն համար՝ երկու օխայ ծանրութեամբ զան- գակ մը ձիւր կախած երեք օր պղծելու դատապարտվեցաւ: Ար կարծիք, որ երբ դատաստանադիրքն այս բարեարտական եւ միանգամայն ծիծաղելի պատիժները խա- փանած է:

— Շաբաթ առտու՝ արքունի թըն- դանօթարանի վերատեսուչ վեմակալը ԼՀճաթ Ֆէթհի փաշային Եռաւիւտ գեղի ծովեղեկայ պալատին տուր՝ եփե- լու սենեակը (գահիլ օճաղը) բռնկելով, հոյին բռնութեանէն հրդեհը այնպէս շու- տով տարածեցաւ, որ անհնար եղաւ ա- ռաջքն առնել, եւ երկու ժամու մէջ այս հոյակաւ ու շքեղ պալատը հոյ ճարակ եղաւ մէջի բոլոր ծանրադին կահ- կարամբովը՝ որոնց գումարը 5000 քը- սակ կը հաշուեն:

Բ. Գրան նախարարները՝ որ փու- թացի օգնութեան դացեր էին, մեծ աշ- խատութեամբ հաղել կրցան աղատել այրած պալատին կից եղող Մըրթը Հա- նրմին պալատը, որուն մէկ Էօնէ միայն այրեցաւ:

— Շաբաթ առտու՝ Իսկիւտար Տաղ Համամը ըսված թաղը՝ յոյն մար- դուն հայազգի կինը իր տանը մէջ ըս- պաննված գանձվեցաւ: Ըստ եղեռնա- գործութեան հեղինակը երկն է եղեր, որ կնոջը գէշ վարքը տեսնելով, կ'ըսեն, զանկա խղեր փախեր է: Տեսնութիւնը ետեւէ է այս մարդասպանը գանձելու:

— Արեւի իրիւնալ նոյնպէս Իւս- կիւտար Առնքին Եղին ըսված թաղը խրուաթ մը եւ յոյն մը իրարու հետ կրո- վելով, խրուաթը դանակը յոյնի փորը խօթելով սպաննեց զանկա ու փախաւ:

— Երկուշաբթի իրիւնալ դարձեալ Իսկիւտարի Եղին մահալէն գինետան մը մէջ տանի չափ Բեֆալիսիայի Հա- յու մը հետ վեճ ընելով զանկա գարկին, նոյն միջոցին զարնուողն եղբայրը վոյց հասնելով, ուղեց եղբայրը աղատել, բայց Քեֆալիսիայիները ան ալ քանի մը տե- ղէն զարկին: Տէրութեան զինուորները վոյց հասնելով շարադրձներէն չորսը բռնեցին, որոնք Կ. Պոլիս բերվելով տես- չութեան բանտը դրվեցան դատաստան- նին տեսնվելու համար:

Օտրնվող երկու եղբայրներուն եղբնին վերջերը ծանր են, բայց մեռնե- լէ աղատելուն յոյս կայ:

— Երեքշաբթի ժամը վեցուկէսին միջոցները եռադոյթ թիւով (Իււ շիֆթէ) նաւակ մը որ 22 ճամբորդով Իսկիւ- տար կ'երթար, Պէշիկթաշի առջեւ եր- կաթ նետած նաւու մը շղթային դարն- վելով ընկղմեցաւ: Բարձրաստիճան

